02/10.1/17380-17
2017-08-02

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ԱՐԱ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սաղաթելյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (*Պ-043-30.06.2017-ՊԻՄԻ-011/0*) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2017 թվականի հուլիսի 31 -ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 860-Ա որոշումը:

Հարգանքով՝

ՎԱՀԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (*Պ-043-30.06.2017-ՊԻՄԻ-011/0*) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է ներկայացված օրենքի նախագծով քննարկվող գործող օրենքի հոդվածը թողնել անփոփոխ՝ հետևյալ հիմնավորմամբ՝

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում «մոլեխաղեր» եզրույթը կիրառվում է միայն 364.1-ին հոդվածում և հաշվի առնելով, որ այն քրեաիրավական եզրույթ չէ, գտնում ենք, որ նպատակահարմար չէ բլանկետային դիսպոզիցիայում սպառիչ սահմանում տալ այնպիսի եզրի, որն ընդհանուր առմամբ իրավունքի այլ ճյուղերի կարգավորման առարկա է: Հատկապես, եթե քննարկվող նորմի գործող շարադրանքը միանգամայն բավարար է հանցակազմի հատկանիշների նույնացման համար՝ օգտագործելով իրավական նորմի մեկնաբանության տառացի կամ քերականական եղանակը:

Բացի դրանից, նախագծի հիմքում դրված տրամաբանությամբ առաջնորդվելու դեպքում անխուսափելիորեն անհրաժեշտություն կառաջանա Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հատուկ մասի հոդվածներում սահմանել մի շարք գործածվող եզրույթների օրենսդրական հասկացությունները, ինչը կնպաստի քրեական օրենսդրության արհեստական և չհիմնավորված ուռճացմանը: Այդ առումով ընդունելի չէ նախագծի հիմքում դրված մոտեցումը:

Հարկ է նկատի ունենալ նաև, որ «մոլեխաղ» եզրույթի օրենսդրական հասկացությունը բացակայում է նաև Հայաստանի Հանրապետության քրեական նոր օրենսգրքի նախագծի 1-ին հոդվածում, որտեղ նշված է քրեական օրենսգրքում օգտագործվող հիմնական հասկացությունների բովանդակությունը:

Վերոգրյալի հիման վրա գտնում ենք, որ նախագծի ընդունման անհրաժեշտությունը բացակայում է: